

## ԿԱՐԾԻՔ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Հովհաննես Հարությունի Մելքումյանի՝ «Տնտեսության տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Տարածաշրջանային համաչափ զարգացումը պետական քաղաքականության անբաժանելի մաս է, որն առավել սկսել է ուշադրության արժանանալ 19-րդ դարի կեսերից: Տարածաշրջանային քաղաքականության հիմքում այդ ժամանակաշրջանից սկսած կենտրոն-ծայրամաս հարաբերակցության դիտարկումը սկսել է ավելի կարևորվել, իսկ զարգացման ծրագրերը սկսել են լայնորեն ներդրվել ճգնաժամին զուգընթաց 1929-1933 թթ. Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում և մինչ օրս տվյալ ոլորտի խնդիրն առկա են շատ երկրներում: Խնդիրների առկայությունը պայմանավորված է բազմաթիվ օբյեկտիվ գործոններով: Ու որքան բնականոն, գիտականորեն բացատրելի, այդուհանդերձ, դրանց հետևանքները ցանկալի չեն, սրում են հասարակական կյանքի քաղաքական, տնտեսական լարվածությունը, առաջ բերում անկայունություն, ճգնաժամեր, գործազրկություն ու աղքատություն: Երկրի տարածքային զարգացման անհամաչափությունները սոցիալական ու տնտեսական զարգացման մակարդակների շեղումներն են, որոնք, որպես արդյունք, խոչընդոտում են տնտեսական աճն ու կայուն զարգացումն ինչպես առանձին տարածքներում, այնպես էլ, որպես հետևանք, ամբողջ երկրում:

ՀՀ-ում տարածքային զարգացման խնդիրն սկսել են խորանալ տնտեսական աճի մեծացմանը զուգընթաց՝ արտահայտվելով մայրաքաղաքի տնտեսական դերի և նշանակության աճով, որի արդյունքում մեծացել է կենսամակարդակի տարբերությունը Երևանի և մարզերի միջև: Բացի դրանից, առկա է նաև նշանակալի անհամաչափություններ մարզերի միջև:

Տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների մեղմման տեսանկյունից առաջնային խնդիրի լուծումները շատ են, որտեղ առանձնակի կարևոր է ֆինանսական համահարթեցման մեխանիզմների կատարելագործումը, համայնքներում առկա եկամուտների ավելացման նոր աղբյուրների բացահայտման ուղղություններով: Ֆինանսական համահարթեցման գործող համակարգի պայմաններում պետությունը հիմնականում փոխհատուցում է համայնքների կողմից չապահովված եկամուտների ծավալները, ինչը չի ապահովում համայնքների առաջընթաց զարգացում: Ինչպես նաև համայնքների բյուջեներում ծախսերի գերակշիռ մասը կազմում են վարչական բյուջեի ծախսերի 2/3-ը, որից տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձը կազմում են շուր 1/4: Այսպիսի համամասնությունը զարգացման հեռանկար չխոստացող պատկեր է:

Տարածքային զարգացմանն ուղղված համալիր քաղաքականության իրականացման գործիքամիջոց կարող են հանդես գալ պետական ու մասնավոր հատվածի սերտ համագործակցությունը: Մասնավորապես, միջնաժամկետ հեռանկարում նպատակահարմար կլինի արդյունավետ լուծել տարածքային զարգացման այնպիսի հիմնախնդիրներ ինչպիսիք են՝ նպաստել բնակչության նյութական և ոչ նյութական բարեկեցության և զբաղվածության աճին, նպաստել տարածքներում տնտեսական ու ներդրումային ակտիվությանը, բարելավել ու զարգացնել տարածքներում ենթակառուցվածքները, հանրային ծառայությունների որակը, հասանելիությունն ու արդյունավետությունը, բարձրացնել տարածքային սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված պետական, և մասնավոր ներդրումների ու ծրագրերի նպատակայնությունն ու արդյունավետությունը, նպաստել տարածքային կառավարման բարեփոխումների իրականացմանը, մասնավորապես, միջհամայնքային համագործակցության բարելավմանը:

Հանրապետության համար առանձնահատուկ նշանակություն ունի տարածքային կազմավորումների միջև առկա սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների կրճատման հիմնախնդիրների լուծումը՝ տարածաշրջանների շահերի պահպանման, երկրի վարչատարածքային արդյունավետ կառուցվածքի ձևավորման հիման վրա: Խիստ կարևոր ու արդիական է գիտական հիմնավորմամբ

սահմանել տարածաշրջանների կտրվածքով սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշների համահարթեցման սկզբունքներն ու հիմնական մոտեցումները և գիտականորեն հիմնավորել դրանք: ՀՀ աշխարհագրական և բնակլիմայական պայմանների բազմազանությունը, բնառեսուրսային և արտադրական ներուժների տարբերություններն ի սկզբանե կանխորոշել են բնակավայրերի տեղաբաշխման, արտադրական գերակա ճյուղերի և տրանսպորտային ուղիների ձևավորման ու զարգացման, սոցիալական ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացման հնարավորությունները:

Տարածքային զարգացման նպատակային քաղաքականությունը պետք է ուղղված լինի Երևանից դուրս, տարածքներում՝ մարզերում ու համայնքներում տնտեսական աճի խրախուսմանը և սոցիալական զարգացմանը: Այն պետք է ապահովի առավել ցածր զարգացում ունեցող տարածքների տնտեսական առաջանցիկ զարգացման տեմպեր և միջնաժամկետ հեռանկարում դրանց զարգացման մակարդակների աստիճանական մոտեցում միջին հանրապետական մակարդակին: Միաժամանակ, այդ քաղաքականությունը պետք է ապահովի նաև տարածքների զարգացման տեմպերի մոտեցումը միմյանց և դրանց համաչափ զարգացումը երկարաժամկետ հատվածում:

Ուստի, տարածքային զարգացման անհամաչափությունների հաղթահարումը, տարածքային համաչափ զարգացումը և դրան ուղղված նպատակային քաղաքականության իրականացումը հարկավեր է դիտարկել որպես երկրի տարածքային զարգացման գերակայություն միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:

### **Հետազոտության նպատակը և խնդիրները**

Ատենախոսության հիմնական նպատակն է միջազգային և հայրենական փորձի ուսումնասիրության հիման վրա բացահայտել ՀՀ տնտեսության տարածքային զարգացման անհամաչափությունները, գնահատել դրանց սոցիալ-տնտեսական հետևանքներն ու առաջարկել այդ անհամաչափությունների մեղմմանն ուղղված գործնական ծրագրեր: Նշված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

✓ հետազոտել տնտեսության տարածքային զարգացման էությունն ու առանձնահատկությունները, ուսումնասիրել թեմային վերաբերող գիտական գրականությունը,

✓ ուսումնասիրել տարածքային զարգացման քաղաքականության արտերկրյա փորձը, գնահատել ՀՀ-ում դրանց ներդրման հնարավորությունները,

✓ մշակել երկրների տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման քանակական գնահատման ընդհանրական համաթիվ,

✓ գնահատել ՀՀ տարածքային անհամաչափություններն ըստ զարգացման ոլորտային ուղղությունների,

✓ համակարգային գնահատման ենթարկել համայնքների բյուջետային եկամուտները՝ ՏԻՄ-երին օրենքով ամրագրված լիազորությունների իրականացման համատեքստում,

✓ վերլուծել վարչատարածքային բարեփոխումների ծրագրի տնտեսական և հասարակական-քաղաքական նպատակահարմարությունը,

✓ առաջարկել համայնքների բյուջետային եկամուտների ամրապնդման բարեփոխումների ծրագիր՝ ուղղված ՏԻՄ-երի ֆինանսական ինքնուրույնության ապահովմանը,

✓ դիտարկել տարածքային համաչափ զարգացմանն ուղղված հիմնական կառուցակարգերը, գնահատել դրանց ներդրման կամ հետագա զարգացման հնարավորությունները, կատարել առաջարկություններ:

### **Ուսումնասիրության օբյեկտը և առարկան**

Հետազոտության օբյեկտն է Հայաստանի տնտեսության տարածքային զարգացման համակարգը՝ անհամաչափությունների մեղմման առաջնահերթությունների համատեքստում: Հետազոտության առարկան ՀՀ տնտեսության տարածքային զարգացման անհամաչափություններով պայմանավորված սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն են:

## **Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը**

Հետազոտության համար տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը, մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին», «Տարածքային կառավարման մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև հիմնախնդրին նվիրված հայրենական և արտասահմանյան գիտական աշխատությունները:

Հետազոտության տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ և այլ երկրների պաշտոնական վիճակագրական ծառայությունների հրապարակումները, ՀՀ համայնքների բյուջեների ամփոփ տվյալները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսամաթեմատիկական, վիճակագրական, գիտական վերացարկման, համեմատական, գործոնային և ֆինանսական վերլուծության մեթոդները:

## **Ատենախոսության գիտական նորույթը**

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

1. Տարածքային զարգացման քանակական գնահատման միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում մշակվել է ցուցանիշների համակարգ, որի հիման վրա հաշվարկվել են երկրների և նրանց առանձին տարածքների սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող ոլորտային ինդեքսներ: Դրանց հաշվարկման և վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ դիտարկվող երկրների մեծամասնությունում տնտեսական զարգացումը հանգեցրել է տարածքային անհամաչափությունների խորացմանը:
2. Համայնքային բյուջեների եկամուտների ու ծախսերի վերլուծության արդյունքում իրականացվել է ՏԻՄ-երի ֆինանսական ապահովվածության քանակական գնահատում: Որոշվել է համայնքների ֆինանսական կայունության աստիճանն ու բացահայտվել են ազդող հիմնական գործոնները:

3. ՀՀ մարզերի համար հաշվարկվել են տարածքային զարգացման ոլորտային ինդեքսներ՝ հիմք ընդունելով մշակված ցուցանիշների համակարգը: Արդյունքում՝ գնահատվել է մեր երկրի սոցիալ-տնտեսական բնեռացման աստիճանը: Միաժամանակ, նույն ցուցանիշների հիման վրա իրականացվել է կլաստերային վերլուծություն, ինչի արդյունքում մարզերն ընդգրկվել են տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող 4 հիմնական խմբերում՝ ընդգծելով մայրաքաղաքի և Սյունիքի մարզի առաջատարությունը մնացած մարզերի նկատմամբ:
4. Իրականացվել է վարչատարածքային բարեփոխումների ծրագրի տնտեսական արդյունավետության գնահատում, որի հիման վրա արձանագրվել է ինչպես ծախսերի տնտեսում, դոտացիաների ու սեփական եկամուտների որոշակի աճ, կառավարման մարմինների հաստիքների արդյունավետ վերաբաշխում, այնպես էլ համայնքների խոշորացման հետ կապված մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետությունը, հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների հասանելիությունը, խոշորացված համայնքում ընդգրկված բնակավայրերի զարգացման համաչափությունը:
5. Վերլուծվել են եկամտային հարկից և շահութահարկից մասհանումները՝ որպես համայնքային եկամուտների այլընտրանքային աղբյուրներ և ՏԻՄ-երի ֆինանսական ինքնուրույնության ապահովման հիմնական ուղղություն: Ներկայացվել է առաջարկվող բարեփոխումների ծրագրի ներդրման գործնական քայլերի նկարագրություն, որի երկարաժամկետ նպատակը հանդիսանում է ֆինանսական համահարթեցման դոտացիաների փոխարինումը հարկային մասնահանումներից եկամուտներով և դրա արդյունքում՝ ինքնաբավ համայնքային տնտեսությունների ձևավորումը:
6. Առանձնացվել են ՀՀ տարածքային համաչափ զարգացմանն ուղղված հիմնական կառուցակարգերը, գնահատվել են դրանց ներդրման կամ հետագա զարգացման հնարավորությունները, ներկայացվել են որոշ գործնական մոտեցումներ՝ ուղղված այդ հնարավորությունների կենսագործմանը:

## **Աշխատանքի գործնական նշանակությունը**

Ատենախոսության ուսումնասիրության նյութերը քննարկվել է ՀՀ Պետական կառավարման ակադեմիայում, իսկ ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են 8 գիտական հոդվածներում:

Աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ ֆինանսների, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի, ՀՀ համայնքների և այլ կազմակերպությունների կողմից՝ համապատասխան քաղաքականության մշակման, բարեփոխումների իրականացման համար:

## **Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ**

Ատենախոսությունում տեղ են գտել հետևյալ թերություններ՝

1. Աշխատանքում քննարկվում է համայնքներում ենթակառուցվածքների բացակայության, որոնք առկա են անբավարար ֆինանսական միջոցների հետևանքով: Հարկավոր է նշել որ ոչ բավարար ենթակառուցվածքների առկայությունը էական խոչընդոտ է հանդիսանում մարզի զարգացման հնարավորությունների առումով: Թիրախավորված ներդրումային ծրագրերի իրականացումը ՏԻՄ-ի կողմից ենթակառուցվածքների ձևավորման առումով էականորեն կնպաստեն գործարարների ներդրումային ծրագրերի իրականացման, բնակեցման գրավչություն ավելացնել: Ներկայումս մայրաքաղաքի մերձակա համայնքներից շատերում դեռևս լուծված չեն նվազագույն կենսապայմաններ, ինչպիսիք են ջրամատակարարում-ջրահեռացումը, ճանապարհները, էլեկտրամատակարարումը: Այս առումով հարկավոր է առանձնակի շեշտադրում ունենալ նվազագույն կենսապայմանների առաջնային ստեղծմանը: Աշխատանքը կշահեր, եթե տրված լինեին ընդհանուր գնահատականներ ըստ մարզերի, թե ինչ ֆինանսավորման ծավալներ կարող է պահանջել այսպիսի նվազագույն կենսապայմանների ապահովումը, ինչպիսի ֆինանսավորման աղբյուրներից է հնարավոր այն իրականացնելու համար:

2. Տարածքային զարգացման առումով կարևոր նախաձեռնություն է եղել 2021թ-ին հարկային օրենսգրքում փոփոխությունը, որով վճարված եկամտային հարկի գումարներից բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից ստացված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող սոկոսների գումարների վերադարձը 2025 թվականի հունվարի 1-ից հետո կիրառելի է միայն Երևան քաղաքի վարչական տարածքից դուրս գտնվող շինությունների համար: Այս օրենսդրական նախաձեռնությունը փուլայի անցումներ է նախատեսում, իսկ 2025-ից այն ամբողջությամբ դուրս է բերում Երևան քաղաքում կառուցապատվող շինությունները: Հաշվի առնելով, որ հետագա կառուցապատումը, բնակարանային փոնդի հեռանկարային ընդլայնումը մարզերում մեծ խթան կարող է հանդիսանալ մարզերի հեռանկարային զարգացման համար, ուստի աշխատանքը կշահեր, եթե կատարվեին այս կոնտեքստում գնահատումներ, վերլուծություններ և եզրահանգումներ:
3. Տարածքային զարգացման արդյունավետ ռազմավարության մշակման համար առաջնային է գնահատել ըստ յուրաքանչյուր համայնքի, մարզի թե ինչպիսի մրցակցային առավելություններ ունի տվյալ տարածաշրջանը, որից հետո թիրախային ներդրումային ծրագրերով արդյունավետ կլինի իրականացնել տվյալ ծրագրը: Յուրաքանչյուր համայնքի մրցակցային առավելությունը պայմանավորվում է ռեսուրսներով, հեռանկարով, աշխարհագրական դիրքով, սոցիալական սոցիալական և բազում այլ գործոններով, որոնցով յուրաքանչյուր տարածաշրջան ունենալով իր մրցակցային առավելությունը՝ կկարողանա ռեալիզացնել իր հեռանկարային զարգացումը: Բազում համայնքներ չունեն նմանատիպ վերլուծություն-թիրախավորում: Այն իրականացնելու համար հարկավոր է “գույքագրել” ունեցած բոլոր տեսակի ռեսուրսները և կառուցել ռազմավարություն, պլանավորել ճյուղերի զարգացման սցենարներ: Աշատանքում այս առումով հարցադրումները բացակայում են: Աշխատանքը կշահեր, եթե լինեին այս առումով վերլուծություններ և առաջարկներ:
4. Աշխատանքում առկա ցուցանիշների վերլուծություններից շատերը կատարված են մինչև 2018-2019թվականները (գծապատկերներ 1.2-ից 1.19-ը, Գծապատկեր 2.9-ից

2.13, հավելվածներ 2-ից 19-ում ներկայացված աղյուսակներ): Ինչպես նաև Կլաստերային վերլուծությունը նույնպես սահմանափակված է մինչև 2019 թվականի տվյալներով (աղյուսակ 2.18): Առնվազն 2020թ-ի տեղեկատվության ներկայացումը և վերլուծությունը առավել արդի և հիմնավորված կդարձնեն աշխատանքը՝ ներկայիս փոփոխություններին համահունչ:

5. Համայնքային բյուջեներին իրական և կայուն եկամուտներով ապահովելու տեսանկյունից ներկայացված է եկամտային հարկից և շահութահարկից մասհանումների մեխանիզմի անհրաժեշտությունը, որի վերջնական նպատակը հանդիսանում է ինքնաբավ համայնքային բյուջեների կայացումը: Որպես այդպիսին՝ առաջարկվել է ֆինանսական համահարթեցման դոտացիաների փոխարինումը եկամտային հարկով և շահութահարկով՝ ըստ պետական բյուջեի կառուցվածքում վերջիններիս ունեցած տեսակարար կշռի 65% և 35% հարաբերակցությամբ: Հաշվի առնելով, որ այս համամասնությունը տարբերվում է ըստ յուրաքանչյուր տարածաշրջանի, կախված տարածաշրջանի առանձնահատկություններից, կարծում են նպատակահարմար լինել առաջարկել ֆինանսավորման այլ տրամաբանություն-մոդել, որը հաշվի կառնի յուրաքանչյուր տարածաշրջանի առանձնահատկությունները: Տարածաշրջանի առանձնահատկությունների վերլուծությամբ և դրանից կախված բաշխման-վերաբաշխման մոդելների ներդրումը թիրախավորված խնդիրների լուծման արդյունավետ միջոց է:

### ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն արժեզրկում, այլ հետապնդում են աշխատանքում քննարկված հիմնախնդիրների մեթոդաբանական հիմքերի բարելավմանը:

Ատենախոսության վերլուծություններն ու եզրահանգումներն ունեն ինչպես տեսական ու մեթոդաբանական, այնպես էլ գործնական նշանակություն:

Աշխատանքը գիտական պատշաճ մակարդակով կատարված ավարտուն աշխատանք է: Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները արտացոլված են սեղմագրում և հեղինակի գիտական հրապարակումներում:

Հովհաննես Հովհաննեսի «Տնտեսության տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը, ներկայացված՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ, համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ մասնագիտական խորհրդի որոշմամբ:

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

«Սմարթ Սիթի Դիվելոպեր» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն

Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ



S. Վ. Հարությունյան

25 հունիսի 2022թ.

